



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՓԱՒՍՏՈՍԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ՆԿԱՏՄԱՄԲ ԵՂԱՍԵ

ԴԻՏՈՂՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԱՍԻԱՆ

Ա. Փաւստոս էջ 13

«Եթէ ոք գտցի որ և արացք ունել զուխ հաստատեալ հաւատոց», մեր ուղղած էինք աւասցի, իսկ Հ - Կ. Տ. Սահակեանն՝ կարացի: Այս յարմար թուի այդ տեղոյն կարացի. որովհետև «հաւատատեալ հաւատոցը» պահելու համար մարդու կարողութենէն ի վեր է, զա վերնական մի ձրի տուրք է. ուստի մարդ կարող է ասել՝ ունել զհաւատս, և ոչ թէ կարող է ունել «զուխ հաստատութեան

հաւատոյ » առանց ստորագրութեանս Ուրդ առաջի եղեալ ուղղագրութեան մէջ ի նկատի պէտք է ունենալ ո՞վ է ասողը (կամ կարացողը ըստ վերջին ուղղագրութեան)։ Բուզանդ կը գրէ. «Եւ յետ նոցա թագաւորեսցէ Ստորին, յապարասան յանձնասէր, յարծաթասէր, ի մտախար, յանպատսպարան, յանպիտան ի սուտակ և ի բանարկու մարդկանք»։ այս բոլոր ութ անականներու կարաւանն անոր համար է, որպէս զի ցոյց տայ թէ Ստորինը թագաւորելով այդպիսեաց մէջ չի պիտի գտնուի, կամ հագիւ հազ գտնուի մէկն որ ասէ թէ ես պահած եմ «զուխտ հաստատութեան հաւատոյ » որովհետեւ այդ ժամանակի մէջ պիտի բարձուի աստորագրութեանը։

Բ. էջ 20 տող 28

«Ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց և ոչ նայել»։ մեք ուղղած էինք « և ոչ տիրել »։ Իսկ Հ. Կ. Տ. Սահակեանն «Եւ ոչ (ի)նայել»։ Աստ եւս խնայել անյարմար թուի. որովհետեւ «արշաւել, աւերել» բայերից յետոյ՝ ինչ խնայել կրնար լինել՝։ Նա մանաւանդ որ բըզ գորավարները թոյլ չեն տար մըտնելու Հայոց երկիրը ըստ կամս յափշտակութիւն և աւերմունք գործելու ։ Բայց Պարսիկք ոչ թէ արշաւելու և աւերելու կու գային այլ մանաւանդ տիրելու։ Եթէ «տիրել» շատ է այդ տեղոյ համար, թողլով բնագիրը « Եւ ոչ նայել » պէտք է ընդունել որ բանն թերի է բնագրի մէջ։

Գ. էջ 31 տող 14

«Յերեսան յանդիմանութեամբ հարկանելով, խրատելով կշտամբելով սրկուներ

1. Ոչ տային . . ոչ խնայել. վերջին ուր՝ այստեղ ապիմի ժխտականին կրկնումը չէ, այլ խնայելի կը գտանուի. ուստի այդ կտորը մենք կը թարգմանենք. «չէին թողոր . . աւերել և չխնայել»։ կ'որգրէին խնայելու, ան-գործիքը. ասով մեր մեկնութիւնը հակասական չի գար աւերել բային։ ԵԻԲ. ԹԺԲ.

զսպանումն տանջանաց յալիտենական բարկութեան»։ Ուրիդ թուի ըստ Հ. Կ. Տ. Սահակեանի պահել զառաջին հարկանելով և լատագոյն թուի կարգալ ստաչի սրկուներ։

Դ. էջ 35 տող 25

«Վասն այնորիկ անընտիրք եղեալք, ի հպարտութեանն խոտեցան ըստ յառաջագոյն տեսլեանն հօրն իւրեանց »։ մեք ուղղած էինք ի քահանայութեանն իսկ Հ. Տ. Սահակեանն ի հրպտորեկեկ (= ի հայրապետութենէ) խոտեցան, համաձայն Բ սոպ. ծանօթութեան, Եթէ իսկական Բուզանդի օրինակագրին միտ զրուի նա միշտ գրումէ՝ ֆահանայապետ, Երպիսկոպոսապետ, Յառաջ քան վեցերորդ դար Հայաստանեաց եկեղեցւոյ եպիսկոսապետները չեն կոչուած հայրապետ և չէին կարող կոչուիլ ըստ եկեղեցւոյ կանոնաց, որի վրայ ծանրանալ տեղւոյս չէ։ Բուզանդի ընթերցումսները ուրեք ուրեք հարազատ չեն. ինչպէս նաև առաջարկեալ տեղին։ Պապ և Աթմանագինէս դեռ յաշխարհական վարս եղած ժամանակ խոտան և անպիտան գտան. նոքա դեռ քահանայ չէին որ Հայրապետութեան համար խոտան գտնուէին։ Անոնց անարժանութիւնը «ըստ յառաջագոյն տեսլեան հօրն իւրեանց» յայնմ էր որ նոքա քահանայութեան աստիճանին անարժան էին. «Եւ իսկ և իսկ ետես ի տեսլեանն զի երկու էին մանկունքն, և ոչ հաճոյ ի պաշտօն տեսան Աստուծոյ» էջ 11 տող 5։

Հմտ. էջ 43 Գլ. ԺԵ. տող 7

Ե. էջ 48 տող 32.

«Եւ գտանէին զնոսա լուկ ցամաքեալ զկնձղացեալ զոսկերս նոցա»։ Մեք ուղղած էինք զկնձղացեալ. իսկ Հ. Տ. — Սահակեան զկնձղացեալ որ արդէն մեք ի նկատի առած էինք, բայց նախամեծար համարեցանք կնձղացու։ Ահա պատճառը ։ Դիցուք թէ հրեշտակն՝ «ի նմանութիւն փայլատական» մի միայն երկու եղբայրները սպաննած լի-


նի, թէ և փայլակը կայծակնահար ընելով տունը՝ անկարելի էր որ միև տաճարակից ուրախակից բազմականակից մարդիկն ազատէին. մենք բնագրի ետեւէն զնանք: Տաճարի դուռը բաց մնացեր էր, ոչ ոք երկիւղից մօտ չէր գնար և ոչ իշխէր ներսը նայել: Հին աշխարհի տաճարները ըստ մերոց պատուհան չունէին, այլ լուսանցոյց երդիր, ուրեմն անձրէն և արևն եւս ըստ կամա մտնելով ներս, ըմբիպպէս լուծում և քայքայում էին զէջ ինկած մարմինները՝ որոնք անտերունչ թափուած էին բազում ամիսներ «մինչև նեխեցան մարմինք նոցա, և կողոպտեցան և յաղկեցան. քակեցան լուծան ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա»: Այսպիսի լուկ չօր և ցամաք վիճակի մէջ ոսկրոտիք սպիտակ կրի կտորների կրնային նմանել քան թէ կոճի, որ մարդու իրանը կը նշանակէ ամբողջովին, մինչ ցրտած ոսկորների կոճոց սակ ոչ է ի դէպ: Աւելի յարմար չէ՝ ասել «զհողացեալ զոսկերս նոցա». ըստ այնմ «հողացեալ մարմինք». քանզի յաղիկի մօտ է փտելուն և հող դառնալուն:

Ձ. էջ 56 տող 2.

«Աոին զկապուտ, զաւար բանակին և զկանայս թագաւորին և զբամբիշն և ըզբանական ընդ նոսին». մեք ջնջեր էինք այդ բարք. իսկ Հ. Տ. Սահակեանն ուղղեր է զբանական, այսինքն իբր բուն բանակը (անշուշտ վրանները): Այս ուղղութիւնը ըստ մեզ սեղինն չէ. զի ոչ երբէք բուն բանակը վրանները կը զատկացուին, այլ այն՝ որ առ այլ կոչի զquartier général, ուր է Սպարապետն և խորհուրդ նորա: Ուստի Հայք երբ «աոին զկապուտ, զաւար բանակին» անպատճառ տիրացած լինելու էին նաև բուն բանակին, որովհետև «զկանայս թագաւորին և զբամբիշն» աւարի հետ գերած էին, և Շապուհ հազիւ հազ մագապուր ազատած, մէկ հատ քաղընթաց ձիով կը փախչի. ինչ կը մտար. արդեօք զբանակոն? վրանները: Ուրեմն կամ ջնջելու է և կամ եթէ տա-

կաւին հարկ կայ աւելացնել կամ ուղղել, մօտաւորագոյն թուի — կանոնց և քամբիշ հետ սակ և «զբանկանն ընդ նոսին»: Որովհետև «աոին զկապուտ և զաւար բանակին» աոին — թող զվրանները — նաև «զինչս և զստացուածս նոցին զկանայս նոցա և զզանձս և զկիտանս (իմա՞ զկանս) և զկազմած նոցա»:

Հ. Գ. ՆԱԼՊՈՅՏԵԱՆ



ՀԱՅԸՁԷՆ ՄԻ ՔԵՐԹՈՒԱՍ

— 398 —

Պարսիկ բանաստեղծներուն մէջ Հաֆթըր, կրնամ ըսել, ամենէն անմատչելին և ամենէն անթարգմանելին է: Հաֆթըրէն երկու տող յաջողապէս թարգմանել և նոյն զեղեցկութիւնը և ներդաշնակութիւնը տալ իւր լեզուին մէջ, հաւասար է հատոր մը թարգմանելու, նախ յանգային դժուարութեանց և ապա լեզուին անհամեմատ գեղեցկութեան և քաղցրութեան պատճառաւ:

Ամէն ուրիշ բանաստեղծները, որպէս են Ֆիրդուսի, Սուադի, Ճամի, Խայեամ, Ճէլլալ-Էտտիյնի-Բումի, ևն, իրենց տաղերը մեծաւ մասամբ մեանելի ոճով գրած են, դուն ուրեք և բուպաի, որով, ամէն մէկ երկեակին կամ քառեակին յանգը փոփոկելով՝ դիւրութիւն կու տայ թարգմանչին նորանոր յանգեր գտնելու: Մինչդեռ Հաֆթըրեան odeերը սայպէս չեն: Մի և նոյն յանգն է որ րովանդակ քերթուածի մտքով տեւողութեան մէջ ամէն երկեակին ծայրը պիտի լսուի, 20-30 և երբեմն աւելի անգամներ: Դիւրին չէ թարգմանչին, իւր լեզուին մէջ, նոյնչափ նմանայանգ բառեր գտնել, հեղինակին հետ զուգակշռութիւնը պահելու համար:

Գալով լեզուի հանգամանաց, սա ալ մի այլ անհնարին արգելք է որ կը կասեցնէ թարգմանչին գրիչը: Գազափարնէրու նորութեան՝ այլզգանութեան և անակնակներու հետ գործ չունինք հոս. Հաֆթըրին նիւթը միշտ և միշտ նոյնն